

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՊՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**I. Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության և անկախության շրջանակներում հիդրոէներգետիկ պաշարների օգտագործման դերն ու նշանակությունը:**

Ներկա դրությամբ վերականգնվող էներգետիկ պաշարներից ամենաշատն օգտագործվում են հիդրոպաշարները:

Հայաստանի Հանրապետությունում ՀԷԿ-երի կողմից էլեկտրական էներգիայի առավելագույն տարեկան արտադրանքը գրանցվել է 1993 թվականին, որն իրականացվել է հիմնականում Սևանա լճից աննախադեպ բարձր ծավալների ջրառի հետևանքով և հանգեցրել է լճի մակարդակի զգալի իջեցմանը:

Սևանա լճի մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառումը, ինչպես նաև ՀԷԿ-երի Սևան-Հրազդանյան կասկադում էլեկտրական էներգիայի արտադրանքի ռեժիմի համապատասխանեցումը Սևանա լճից ոռոգման նպատակներով ջրի բացթողման ռեժիմներին հանգեցրել են ՀԷԿ-երի կողմից էլեկտրական էներգիայի արտադրանքի զգալի կրճատումներին, մասնավորապես 2007 թվականին ՀԷԿ-երի կողմից էլեկտրական էներգիայի փաստացի արտադրանքը կազմել է 1.86 մլրդ.կՎտ.ժ, 2008 թվականին 1.82 մլրդ.կՎտ.ժ իսկ 2009 թվականին 2.05 մլրդ.կՎտ.ժ: Հիդրոէներգետիկական ռեսուրսները փաստացի՝ 2010թ. դրությամբ, ապահովել են էլեկտրական էներգիայի տարեկան արտադրանքի մոտ 40%-ը:

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) ունի բավական մեծ սեփական վերականգնվող էներգիայի պաշարներ, որոնց օգտագործումը թույլ կտա բավարարել 2025թ էլեկտրաէներգիայի պահանջարկի մինչև 30%-ը (վերջինս չի ներառում երկրաջերմային էներգիայի, արևային էներգիայի անմիջական փոխակերպման, բիոգազի հիման վրա արտադրվելիք էլեկտրաէներգիայի ներուժը և հողմային էներգիայի զգալի մասը):

2025թ էլեկտրաէներգիայի պահանջարկի 30%-ի բավարարումը վերականգնվող էներգետիկ պաշարներով ապահովելու համար անհրաժեշտ է զարգացնել հիդրոէներգետիկական, մասնավորապես՝ կառուցել էլեկտրական էներգիա արտադրող նոր կայաններ, որի արդյունքում համապատասխանաբար կբարձրանա Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության և անկախության աստիճանը:

**II. Նպատակը**

Հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագրի նպատակն է.

1. «Ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝
  - հիդրոէլեկտրակայանների կառուցման գոծընթացի կանոնակարգումը՝ սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ողջամիտ օգտագործելու նպատակով,

- առկա հիդրոէլեկտրակայանների տեխնիկական վիճակի ուսումնասիրումը՝ դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
2. Հետևյալ իրավական ակտերում և տեխնիկատնտեսական հիմնավորման փաստաթղթերում ամրագրված պահանջների հստակեցումն ու կատարումը՝
- ՀՀ Կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի N 1296-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված ՀՀ էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը»,
  - ՀՀ կառավարության 22 հունվարի 2009 թվականի N3 արձանագրային որոշմամբ հաստատված «ՓՀԷԿ-երի զարգացման սխեման»,
  - ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի N24 արձանագրության թիվ 1 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը»,
  - Մեղրի ՀԷԿ-ի տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքների արդյունքները՝ Ծրագիրն իրականացվում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ,
  - Լոռիբերդ ՀԷԿ-ի տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքների արդյունքները, որը 2003-2004թթ. Եվրամիության (TACIS-ի) ծրագրի շրջանակներում պատրաստվել է ՖԻԽՏՆԵՐ ընկերության կողմից, և որի գների հաշվարկի նորացումը իրականացվել է 2007թ. փետրվարին նույն ընկերության կողմից,
  - Շնող ՀԷԿ-ի կառուցման համար Հայհիդրոէներգանախագիծ ինստիտուտի կողմից 1966թ. կատարված տեխնիկական նախագիծը, որը ճշտվել է 1993թ.:
3. Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության շրջանակներում հիդրոէներգետիկ պաշարների օգտագործման խթանումը:

### III. Ներկա վիճակը

Հայաստանի Հանրապետությունում 01.08.2011 թվականի դրությամբ գործող և կառուցվող հիմնական հիդրոէլեկտրակայանները (ՀԷԿ)՝

#### Սևան-Հրազդան ՀԷԿ-երի համալիրը (մասնավոր սեփականություն)

Սևան-Հրազդան ՀԷԿ-երի համալիրի կազմի մեջ են մտնում յոթ ՀԷԿ-եր՝ Սևանի, Հրազդանի, Արգելի, Արգնիի, Քանաքեռի, Երևան-1-ի և Երևան-3-ի ՀԷԿ-երը, որոնց գումարային տեղակայված հզորությունը կազմում է 559.4 մՎտ, իսկ տարեկան նախագծային արտադրանքը՝ 2.32 մլրդ. կՎտ. ժամ:

ՀԷԿ-երը գտնվում են Հրազդան գետի վրա և ներկայումս օգտագործում են Սևանից ոռոգման նպատակներով բացթողնվող և Հրազդան գետի վտակների ջրերը:

#### Որոտան ՀԷԿ-երի համալիրը (պետական սեփականություն)

Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգը բաղկացած է 4 էլեկտրակայաններից, որոնք տեղաբաշխված են Որոտան գետի վրա, Սյունիքի մարզի տարածքում եւ օգտագործում են ինչպես գետի հունի, այնպես էլ վտակների ջրերը:

Հիդրոէլեկտրակայանների համակարգը կազմված է Սպանդարյան, Շամբ, Տաթև և «Էր-Էր» ՀԷԿ-րից, որոնց գումարային տեղակայված հզորությունը կազմում է 405.4 մՎտ, տարեկան նախագծային արտադրանքը՝ 1.16 մլրդ. կՎտ. ժամ:

#### Ձորա ՀԷԿ-ը (մասնավոր սեփականություն)

Ձորագետ գետի Ձորա ՀԷԿ-ը Հայաստանի Հանրապետության առաջին խոշոր հիդրոէլեկտրակայանն է, Դեբեդի կասկադի առաջնեկը, որը շահագործման է հանձնվել 1932թ. մոտ 25.2 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 90 մլն. կՎտ. ժամ տարեկան նախագծային արտադրանքով:

Փոքր ՀԷԿ-երը (մասնավոր սեփականություն)

Հայաստանի Հանրապետությունում փոքր հզորության ՀԷԿ-երի կառուցման գործընթացը համարվում է որպես վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման առաջատար ուղղություն, քանի որ այն կնպաստի Հայաստանի Հանրապետության էներգետիկ անկախության ամրապնդմանը:

Փոքր հիդրոէլեկտրակայաններ (ՓՀԷԿ) են համարվում մինչև 10 ՄՎտ ընդհանուր տեղակայված հզորությամբ հիդրոէլեկտրակայանները:

2011 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ էլեկտրական էներգիա էին արտադրում 110 փոքր ՀԷԿ-եր, որոնց գումարային դրվածքային հզորությունը կազմում էր մոտ 147 ՄՎտ, իսկ էլեկտրական էներգիայի նախագծային արտադրանքը տարեկան շուրջ 476 մլն. կՎտժ:

2011 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ կառուցման լիցենզիաներ էին տրվել 73 ՓՀԷԿ-երի համար, որոնց գումարային դրվածքային նախագծային հզորությունը կազմում է մոտ 142 ՄՎտ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 22 հունվարի 2009 թվականի N3 արձանագրային որոշմամբ հաստատված «ՓՀԷԿ-երի զարգացման սխեման» ընդգրկում է 116 ՓՀԷԿ-եր մոտ 147 ՄՎտ գումարային դրվածքային հզորությամբ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի N30 արձանագրային որոշումը ուժը կորցրած է ճանաչվել ՓՀԷԿ-երի զարգացման սխեմայի հավելվածի «Սևանա լճի ավազան» բաժինը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՓՀԷԿ-երի զարգացման սխեմայում» ընդգրկված ոչ բոլոր ՓՀԷԿ-երը կարող են կառուցվել, նաև բնապահպանական նկատառումներով գետերում ջրերի հոսքի համար սահմանվող ավելի խիստ պահանջներն ու տարիների ընթացքում ջրերի հոսածավալների բնական նվազումները, ինչպես նաև այլ հանգամանքները, առավել իրատեսական է դիտվում ապագայում ՓՀԷԿ-երի գումարային դրվածքային հզորության ներուժը գնահատել շուրջ 400 ՄՎտ (առանց Սևանա լճի ավազանի ՓՀԷԿ-րի), իսկ տարեկան արտադրանքը գնահատել շուրջ 1,0 մլրդ. կՎտժ:

**IV. Հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագրերը**

1. Հայաստանի Հանրապետությունում նախատեսվում է կառուցել երեք նոր խոշոր ՀԷԿ-եր, յուրացնել փոքր ՀԷԿ-երի ուսումնասիրված և տնտեսապես շահավետ ներուժը, ինչպես նաև վերանորոգել ու վերազինել Որոտանի ՀԷԿ-երի համալիրը և Ձորա ՀԷԿ-ը: Ներկայումս խոշոր գետերից մնում են էներգետիկ նպատակներով չօգտագործված Դեբեդ գետը իր Ձորագետ վտակով և Արաքս գետը:

Աղյուսակ. Հիդրոէներգետիկայի ոլորտի զարգացման ծրագրերը

Կառույցը կամ ծրագիրը	Ընթացքի կամ անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվություն	Կատարման ժամկետը
1	2	3
<b>1. Հայաստանի 3 խոշոր ՀԷԿ-երը</b>		
Արաքս գետի վրա՝ Մեղրի ՀԷԿ-ը (մոտ 130 ՄՎտ հզորությամբ և շուրջ 800 մլն. կՎտժ էլ. էներգիայի տարեկան արտադրությամբ):	2010 թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ կառավարությունը պայմանագիր ստորագրեց իրանական համապատասխան ընկերության հետ՝ Մեղրի ՀԷԿ-ի կառուցման ծրագիրը «կառուցում-տնօրինում-շահագործում»:	Նախատեսվող թողարկումը 2017 թ

	փոխանցում» հիմունքներով իրականացնելու վերաբերյալ:	
Դերբեդ գետի վրա՝ Շնող ՀԷԿ-ը (մոտ 75 ՄՎտ հզորությամբ և 300 մլն. կՎտժ էլ. էներգիայի տարեկան արտադրությամբ):	Շնող ՀԷԿ-ի կառուցումը նախատեսվում է իրականացնել մասնավոր ֆինանսական միջոցներ ներգրավելու տարբերակով:	Նախատեսվող թողարկումը՝ ըստ մասնավոր ներդրող ընկերության հետ կնքվելիք համաձայնագրի
Ձորագետ գետի վրա՝ Լոռիբերդ ՀԷԿ-ը (մոտ 66 ՄՎտ. հզորությամբ և շուրջ 200 մլն. կՎտժ էլ. էներգիայի տարեկան արտադրությամբ):	2003-2004թթ. Եվրոմիության (TACIS-ի) կողմից իրականացված ծրագրի շրջանակներում Ֆիխտներ ընկերությունը պատրաստել է տեխնիկա-տնտեսական հիմնավորում: 2007թ. փետրվարին նույն ընկերությունը իրականացրել է գների հաշվարկի նորացում: Լոռիբերդ ՀԷԿ-ի կառուցման ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել մասնավոր ֆինանսական միջոցներ ներգրավելու տարբերակով:	Նախատեսվող թողարկումը՝ ըստ մասնավոր ներդրող ընկերության հետ կնքվելիք համաձայնագրի
<b>2. Հայաստանի ՓՀԷԿ-երը</b>		
Ներդրողներին առաջարկվող փոքր ՀԷԿ-եր:	ՀՀ կառավարության 22 հունվարի 2009 թվականի N3 արձանագրային որոշմամբ հաստատվել է «ՓՀԷԿ-ների զարգացման սխեման»: Սխեմայում ընդգրկված ՓՀԷԿ-երի համար իրականացվել են նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորման աշխատանքները, որոնց արդյունքները՝ գծագրական նյութերը, տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվարկների ամփոփ արդյունքները, հիդրոլոգիական և այլ տվյալները տեղադրվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պաշտոնական վեբ կայքում և մատչելի են բոլոր ներդրողների համար:	Կանխատեսվում է, որ մինչև 2025թ. փոքր ՀԷԿ-ի տեղակայված հզորությունը կհասնի 400 ՄՎտ՝ էլ. էներգիայի մինչև 1,0 մլրդ. կՎտժ տարեկան իրատեսական արտադրությամբ: Գործարկման ենթակա փոքր ՀԷԿ-երի բաշխման կանխատեսումը ըստ տարիների (տարի / ՄՎտ)՝ 2011 / 20 2012 / 20 2013-2025 / 230
<b>3. Որոտանի ՀԷԿ-երի համալիրի վերանորոգումը և վերագինումը</b>		
Որոտան ՀԷԿ-երի համալիր (գումարային տեղակայված հզորությունը՝ 405.4 մՎտ, իսկ տարեկան նախագծային արտադրանքը՝ 1.16 մլրդ կՎտ. ժամ):	ՀՀ կառավարության և Գերմանական KfW բանկի միջև կնքվել է վարկային համաձայնագիր (BMZID 2007.65.909 առ 20.10.2010թ.) Որոտանի ՀԷԿ-երի համալիրի վերագինման ծրագիր իրականացնելու նպատակով:	Աշխատանքների նախատեսվող ավարտը՝ 2015թ.
<b>4. Ձորա ՀԷԿ-ի վերանորոգումը և վերագինումը</b>		
Ձորա ՀԷԿ-ը մոտ 25.2 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 90 մլն. կՎտ. ժամ տարեկան նախագծային արտադրանքով:	«Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից կազմվել է կառույցի տեխնիկական վիճակի վերաբերյալ համապատասխան արձանագրություն:	Աշխատանքների սկիզբը և ավարտը՝ ըստ ֆինանսավորման առկայության

2. Առաջարկել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ 2016 թվականից սկսած 10 ՄՎտ-ից բարձր տեղակայված հզորությամբ հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները, այդ թվում՝ Շնող և Լոռիբերդ ՀԷԿ-երի համար, սահմանել ոչ ավելի քան 6,5 ԱՄՆ ցենտ առանց ԱԱՀ:

#### V. Ակնկալվող արդյունքը

«Հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը և հավելվածով նախատեսված միջոցառումների իրականացումը կհանգեցնեն հետևյալ նպատակային արդյունքների՝

- կհատակեցվեն հիդրոէներգետիկայի ոլորտի զարգացման ծրագրերը պոտենցիալ ներդրողների համար,
- հնարավորություն կստեղծվի ծրագրերը որպես ներդրումային փաթեթներ առաջարկել մի շարք դոնոր կազմակերպությունների և արտոնյալ վարկեր տրամադրող այլ կառույցների,
- հավելվածի աղյուսակում նկարագրված ծրագրերի համակարգված իրականացման համար կստեղծվեն հնարավորություններ և կկիրառվեն անհրաժեշտ միջոցառումներ:

Հավելվածում ամրագրված «Հիդրոէներգետիկայի ոլորտի զարգացման ծրագրերի» իրականացմամբ ակնկալվում են հետևյալ ազգային ռազմավարական նշանակության արդյունքները՝

- կստեղծվեն էլեկտրական էներգիա արտադրող լրացուցիչ շուրջ 570 ՄՎտ հզորություններ,
- կավելանա էլեկտրական էներգիայի տարեկան արտադրանքը՝ սեփական վերականգնվող էներգառեսուրսների օգտագործմամբ,
- կբարձրանա էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունը,
- զգալիորեն կնվազեցվի Հայաստանի Հանրապետության էներգետիկ կախվածությունը ներկրվող ածխաջրածնային վառելիքներից,
- զգալիորեն կկրճատվեն Հայաստանի Հանրապետության տարածքում ածխաջրածնային վառելիքների այրումից առաջացող ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ:

#### VI. Եզրափակիչ դրույթներ

Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը իրագործելու նպատակով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը մինչև 2012 թվականի սեպտեմբերի 30-ը առաջարկություն կներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ նոր կառուցվող, վերակառուցվող և վերազինվող ՓՀԷԿ-երում հիդրոէներգետիկ ներուժը առավելագույնս արդյունավետ օգտագործելու նպատակով միասնական քաղաքականություն (տեխնիկական չափանիշները, պարտադիր պայմանները և այլն) կիրառելու վերաբերյալ:

Այն կառաջարկվի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ այդ կայանների գործունեության կարգավորման սկզբունքները մշակելու նպատակով:

